

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Իրաւունքների ընդարձակում.—Ներքին Տե-
ւոնիքներ. Արձագանքներ. Նամակ Բախա-
նիքի. Նամակ Այգեքանդոպոլի. Նամակ Խըմ-
քաքուրթեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տե-
ւոնիքներ. Արտաքին լուրեր.—Հնդկական
Ներք.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱՎԱՆ. Մի քաղաքի ռաբաթեան փոխարէն:

ԻՐԱՆԻՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱՅՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանը պատ-
կանում է այն պետութիւնների շարքին,
որոնք առեւ են և տալիս են կանանց ի-
րաւունքներ թէ սեփականութիւն ձեռք
բերելու և թէ պաշտօններ ստանձնելու:
Առաջինը այն պետական խորհուրդը
կը ձևակերպէ կանանց պաշտօնավարական
իրաւունքները և կը տայ նրանց օրէնսդրա-
կան արտայայտութիւն:

Կանայք իրաւունք ունեն վարել պաշ-
տօններ կրթական, դպրոցական և տնտե-
սական մասերում, կարող են լինել բժիշկ-
ներ, մանկաբարձներ, ֆիզիկոսներ, ինժե-
ներների ծառայողներ և հիւանդների խնա-
մատարներ, ծաղկահատներ և ատամնա-
բոյժներ. կարող են լինել բանտային կա-
ռավարիչների օգնականներ, հեռա-
գրական ծառայողներ և ուրիշ հիմնարկու-
թիւնների մէջ պաշտօններ: Կանայք ի-
րանց պաշտօնավարութեան համար կարող
են ստանալ զանազան պարգևներ և պա-
տուանշաններ, բացի աստիճաններից և
օրդեններից:

Ռուսաստանի սահմաններում է գտնա-
վում և այն համայնարանը, այն է Հեյ-
սինգֆորսի համայնարանը, որտեղ մտնե-
լու և դաստիարակութիւններ լսելու կա-
տարեալ արտօնութիւն ստացան կանայք:
Անկասկած՝ Հեյսինգֆորսի համայնարանի
փորձը շուտով կը տարածվի և միւս հա-
մայնարանների վրա և այն ժամանակ Ռու-
սաստանում կանայք իրաւունք ձեռք կը
բերեն տղամարդու հետ հաւասար ուսա-
նող գրվել համայնարաններում և լսել ա-
ւանդած գիտութիւնները:

Կանանց իրաւունքների ընդարձակման
խնդիրը միայն ժամանակի հարց է: Իւրա-
քանչիւր տարի այդ հարցը աւելի և աւել-
ի դրական նուաճումներ է անում, մինչև
որ վերջապէս օրէնսդրութիւնը այլ ևս
խտրութիւն չի գնի տղամարդու և կնոջ
մէջ և կը տայ երկու սեռին էլ հաւասար
իրաւունքներ կրթութիւն ստանալու, սե-
փականութիւն ձեռք բերելու, պաշտօններ

վարելու և իր հասարակական գործերի
վրա ազդելու:

Եթէ լայն քաղաքական իրաւունքների
մասին դեռ կարող են յարուցանել ժամա-
նակաւոր խնդրոտներ և արգելքներ, յա-
մենայն դէպս կրթութիւն ստանալու և
կրթական ցենդ ձեռք բերելու ջանքերը
երբէք չեն կարող նոյն իսկ ժամանակաւոր
կասկածի ենթարկվել: Թող տուէք կին
մարդուն ազատօրէն ուսումնասիրել զի-
տութիւնները և նրանց գործադրել կեան-
քի մէջ: Իրանով կաւերանան մտաւոր մը-
շակների, մասնագէտների և արհեստա-
ւորների շարքերը, որից միայն օգուտ կա-
րող է լինել հասարակութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆՔՆԵՐ

ԼԻ

«Թուրքն անօրէն, խօսքն օրինաց», ասում
է ժողովուրդը, առանձնապէս բարձր գնահա-
տելով ճշմարտութիւնը, երբ նա դուրս է գա-
լիս, իր համոզմունքով, անօրէն մարդու բե-
րանից:

Նոյնպիսի տպաւորութիւն է գործում մեր
վրա ճշմարտութիւնը, երբ նա արտայայտւած
է լինում «Новое Время» լրագրում:

Ժիշէ է, որպէս զի մի ճշմարտութիւն տեղ
գտնի Սուլթանի օրգանում, պէտք է որ նա
արդէն ընդունված լինի կամ ընդունվելու մօտ
լինի գործող չլինելով, բայց այդ հանգա-
մանը աւելի եւս մեծ գին է տալիս այդ դէպ-
քերում այդ օրգանին:

Յարգել հողմացողը դուք չէր կարող, բայց
երբ տօթ ժամանակ հողմացողի շարժումը
գուշակում է, որ հող է բարձրանում, դուք
չէք կարող չուրախանալ ի բոլոր սրտէ եւ
պատրաստ էք նոյն իսկ մի քաղաքի օրհնել
հողմացողը:

Թող մի քաղաքի օրհնված լինի Սուլթանի
թերթը այն հայեացքների համար, որ նա
յայտնում է այժմ կանանց բարձրագոյն կը-
թութեան աղիթով:

Բարձրագոյն բարեհաճութեան արժանացած
մի կարգադրութիւն Հեյսինգֆորսի համայնա-
րանի վարչութեան կողմից.—որով ձեւակա-
տեսալից էր հաւասարում է ինչ կանանց եւ
տղամարդկանց իրաւունքները այդ համայնա-
րանը մտնելու, ուր, ի դէպ, առեւ, մինչև այ-
ժմ էլ ընդունվում էին ուսանողուհիներ,—
առիթ է տալիս «Новое Время»-ին պնդելու,
թէ վերին աստիճանի ցանկալի է, որ Ռու-
սաստանի բոլոր համայնարանների դռները
բացվեն կանանց առաջ:

Ապրում էր անհոգ, իսկ այժմ գոյիպիւծ է
մտնել գոռոց տանապետի հրամանատարու-
թեան տակ, դողալ նրա առաջ, եւ անել այն,
ինչ նա կը հրամայէ, ապրել ուրիշի ցուց-
մունքներով...

Դառն վիճակ:

Այժմ նորից նա յիշեց գիւղը, իր փոքրիկ
տնակը, նրա ետքում գտնվող ծառը, եւ աչ-
քերում փայլեց արտասուքը... Իսկ այդ ծառի
ծալումը՝ Ստանոյ Պերիշիչի տունն է, եւ այդ-
տեղ է ապրում Ստանոյի աղջիկը, գեղեցկուհի
Կրուշան... Ամբողջ գիւղը գիտէր, որ Կրու-
շան—նրա հարմանուհին է: Արդէն երկու տա-
րի է, ինչ նրանք հաւանել են իրար, բարե-
կամեցել եւ համարեա թէ անբաժան էին
գարձել: Եւ առաւօտ, եւ երեկոյ նրանք պա-
տահում էին ծածկում եւ այդտեղ երկար չա-
տախտում, փայլալուծ էին միմեանց եւ համ-
բուրբութեամբ նա—իսկոյն տաք կերպով զգա-
յալ քաղցրերի երանութիւնը... Եթէ պատահ-
մամբ անցնում էր գէթ մի օր առանց տեսակ-
ցութեան, երկուսն էլ տխրում էին, խելառի
պէս այս ու այն կողմն ընկնում, կարծես թէ
իրար տեսնել այլ եւս չէր վիճակված նը-
րանց:

Եւ ահա, երբ գիւղում ամենքը նրանց հա-
մանքի մասին էին խօսում, նրան գինուր

Չը նայելով, որ այժմ նախապարտւում
ները այնքան էլ զօրեղ չեն պահպանողական
դուրսներում, այնուամենայնիւ լրագրող հա-
կաւոր է համարում բերել հետեւեալ ապա-
ցոյցները, որ ուսանողների եւ ուսանողուհի-
ների միատեղ բարձրագոյն կրթութիւն ստա-
նալ ոչ մի անյարմարութիւն չունի:

«Մեծ ընթերցանի» չըջանի սկզբում ուսաց
համալսարանների դռները բաց էին ամենքի
առաջ, ի միջի այլոց եւ կանանց առաջ: Ահա
թէ ինչ էին գրում 1863 թւին Պետերբուրգի
համալսարանի պրոֆէսորները իրանց պաշտօ-
նական զեկուցման մէջ. «Վերջին երկու-երեք
տարվայ ընթացքում մեծ թուով կանայք յաճա-
խում էին մեր դաստիարակութիւններին: Ուստի,
մեր փորձի հիման վրա, մենք կարող ենք հաս-
տատ ասել, որ կանանց ներկայութիւնը լա-
րաներում ոչ միայն երբեք տեղիք չէր տալիս
որ եւ է անկարգութեան, այլ, ընդհակառակը,
մինչև անգամ նպաստում էր այն բանին, որ
ուսանողները իրանց պահէին ամենախիստ վա-
յելութեան սահմաններում: Նմանապէս տի-
կինները չէին կարող երբեք խանգարել ամբի-
ոյից գիտական հարցերը սխտանաւորակա-
րացատրելուն, որովհետեւ ոչ թէ պրոֆէսո-
րներն են գալիս տիկիններին դաստիարակու-
նի համալսարանների փորձը: Ամերիկայում,
օրինակ, մի եւ նոյն համալսարանը յաճախող
ուսանողների եւ ուսանողուհիների մէջ հաս-
տատվել են իսկ ջննդմանական, կորէկտ յա-
րաբերութիւններ:

Վերջապէս, ինչո՞ւ մի բան, որ անյարմար չէ
համարվում Թիւրքիայում, Հեյսինգֆորսի հա-
մալսարանում, ուր ուսանում են մօտ 300 կա-
նայք, պէտք է անյարմար համարվի Ռուսաս-
տանի միւս մասերի համար, կամ թէ ինչո՞ւ
ուսու օրիորդները կարող են արտասահմանի
համալսարաններում ամեն օր հանդիպել ուսա-
նողներին նոյն նստարանների վրա, իսկ Ռու-
սաստանում ոչ:

Երբ Սեփաստապօլի պատերազմի ժամանակ
մեծ իշխանուհի Ելենա Պաւլովնան առաջին
փորձը արեց գլխիկեան ջոկերը ուղարկել վի-
րաւորներին խնամելու համար, նախապաշար-
ված մարդիկ երկրից էին յայտնում, թէ դրա
հետեւանքը կը լինի միայն անաւակութիւն:
Նոյն իսկ զօրքերի հրամանատար իշխան Մեն-
չիկով բացարձակ կերպով հակառակում էր
այդ բանին եւ կանանց համար վերին ա-
տիճանի վերաւորական ենթագործիւններ էր
անում: Սակայն կանայք բացձակաւ դուրս
եկան այդ փորձից:

Արարան:

Ո՛չ աղաչանք-պաղատանքներ եւ ոչ էլ ար-
տասուքները չը կարողացան բաժանման ա-
ռաջն առնել... Եւ այդ ժամանակից նա ոչ մի
անգամ էլ չը տեսաւ նրան... Ամբողջ ժամա-
նակը դանդաղ էր Մօստարում *) եւ երբէկ,
չնորհեւ զօրքերի զօրախաղ դուրս գալուն, նա
յանկարծ իրան գտնում է իր գիւղի մօտ...
Հրէ՛ն, այնտեղ, անտառի ետքում է գիւղը...
Մինչև մի ծխախոտ ծխել-վերջացնել կարելի
է արդէն տուն հասնել...

Բայց նրան թոյլ չեն տալիս վազել այնտեղ...
Տանապետը, այն խիստ վրէժաւոր, կտրա-
կան կերպով եւ կոպտաբար մերժեց նրա խըն-
դրքը եւ մինչև անգամ կարգադրեց՝ պահա-
պան կանգնել: Նրա բոլոր ընկերները հանգս-
տանում են եւ ընով ոյժերը վերանորոգում,
իսկ նա պէտք է պահպանուի կանգնել, Աստուած
գիտէ թէ ինչի համար:

Դրան էլ կարելի էր գիտնալ, եթէ իմա-
նար, որ վաղը գոնէ տուն բաց կը թողնեն
ամենակարճ ժամանակով... Բայց ո՞վ թոյլ կը
տայ, տանապետը... Երբեք... Իսկ մեծերը...
Շատ կարելի է, բայց միթէ նա կը համար-
ձակվի մօտենալ մեծերին...

*) Հերցեգովինայի գլխաւոր քաղաք է:

Նոյնը կը լինի անկասկած եւ համալսարան-
ների հարցի վերաբերմամբ:

Մի ուրիշ առարկութիւն էլ է նախատեա-
նում լրագրողը: Կարող են առեւ, նկատում է
խմբագրութիւնը, թէ մեր համալսարանները
առանց այն էլ լիքն են ուսանողներով: Եւ այդ
առարկութեան դէմ նա հիմնաւոր կերպով առաջ
է բերում այն հանգամանքը, որ լիքն են ոչ բո-
լոր համալսարանները եւ ոչ բոլոր բաժան-
մունքները: Օրինակ, ինչպէս յայտնի է, այս
տարի Օդեսայի համալսարանի լիցուաւսակա-
ն բաժանմունքը աւարտեցին միմիայն երեք
ուսանողներ: Այդ պայմաններում ծիծաղելի չէ
արդեօք ասել, որ համալսարաններում տեղ
չը կայ կանանց համար:

Վերջապէս, կանանց եւ տղամարդկանց բա-
ժանել դպրոցում, որոշ տեսակետից, միտք ունէր
այն ժամանակ, երբ կանայք փակված կանգ
էին վարում: Այդ նկատմամբ դէմ լինել կա-
նանց եւ տղամարդկանց մի եւ նոյն համալսա-
րանում ուսանելուն՝ ինքնախաբէութիւն է
այժմեան ժամանակ, երբ երկուստեքներն եւ
օրիորդները ազատ հանդիպում են միմեանց ա-
մեն տեղ:

S. Յ.

Յ. Գ.—Շատերը հարցնում են, թէ ինչու եւ չեմ
պատասխանում Մ. Գ. Մեկտանին երկու գլխաւոր
պատճառներով: Նախ, եւ կարգին և ծայրէ ի ծայր
չեմ կարգացել Մեկտան քահանայի հերքումը, և երկ-
րորդ, եւ կուտակից եմ առաջ «неужели не было»
(գիտնի ընկածին չեն ծնում) առաձին և միանգա-
մայն համաձայն պ. Աֆոն հետ, որ Մեկտան քահանան
«խաչ է դրել իր վրա»:

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԿԱՆԻԹ

Յունիսի 21-ին

Մօտենում է 1901 թւի յուլիսի 1-ը, այն ար-
տօնեալ ժամանակամիջոցի վայրժանքը, որից յետոյ
մեր նախահանքերի կառավարչներից շատերը
յետ նահանջելով, տեղի պիտի տան օրէնքով
այդ պաշտօնին արժանաւոր ճանաչվածներին:
Յայտնի է, որ մինչև այժմ մեզանում նաչ-
թահանքի կառավարչի պատասխանատու պաշ-
տօնը վարողների մէջ կային մեծ թուով քա-
ղաքային դպրոցների կիսաւարտներից սկսած
մինչև ծխական դպրոցների առաջին բաժան-
մունքը անցած՝ յաճախ մինչև բոլորովին անգ-
րագէտ անձնաւորութիւններ, որոնք զբաւած
ունէին այդ պաշտօնները: Ի՞նչ ասել կուզէ, որ
այդպիսիների զեկավարութեամբ թէ գործը չը
պէտք է տար սպասած արդիւնքը եւ թէ գոր-
ծին ծառայողները ազատ չը պէտք է լինէին
դժգոհութիւնից ու անվերջ բողոքներից:

Դեռ անցեալ 1900 թւի մայիսին կովկասեան
լեռնային վարչութիւնը, ուղարկութեան առ-

եւ, առժամանակ հրացանը ուսից վերցնե-
լով, նա նորից սկսեց յետ ու առաջ քայլել:
—Իսկ ինչ է անում անտուն այժմ.—մտա-
ծում էր նա: Գնանք է... կամ ինչ գործի է...
Յիշում է ինձ... Հարանիքի մասին մտածում
է արդեօք...

Ապա նա նորից հրացանը ուսն առաւ:

—Տէր Աստուած, միայն մի քաղաք, կէս քա-
ղաք բաւական է, որ, որ միայն նայեմ նրան: Եւ
նրան ոչինչ չէի տես, միայն կը հարցնէի, ար-
դեօք, առանց ինձ օրը դժուար է անցնում...
ինձ հարկաւոր է միայն լսել նրա ձայնը...

Շուրջը, կարծես, լսվում էր մէկի քայլերի
ձայնը:

—Կանգնի՛ր.—գոչեց նա:

Ոչ ոք պատասխան չը տուեց:

Նա շուտ եկաւ, չորս կողմը նայեց... ոչ ոք
չը կար:

—Ես միայն կը կմշտէի նրա թից եւ կը
պաշէի.—չարունակեց նա մտածել... Եւ կա-
սէի նրան՝ ինչ որ արտօնում կայ, ու...

Նա գլխաւոր գէպի ծածկաւ հրեց եւ ժա-
մացոյցին նայեց:

—Դեռ եւս մի ամբողջ ժամ կայ... Շատ է:
կանգնելուց էլ յոգնել եմ: Եւ նա նստեց:

—Ոչ ոք, իսկ չի տեսնի—փսփսաց նա ինքն
իրան—Հանգստանում մի քիչ: Բայց մի ակնը-

